

ուերախուժիւն քաղաքս ամենայն վասն նաւիցն եկելոց, զի եկն մինչեւ ցօրս ի Կիրակէն ԼԵ եւ կամ ի նաւ ցորենոյ. եւ անդ յօրս նստեալ էաք Գ ժամ, Ժ նաւ համարեցաւ առջի մեր եւ զի անձրեւ էր:

Եւ Եշի (23 Ապրիլ) ասի եւ խորէլէզ տաճկի բառով, զոր յիշատակ է Սրբոյն Գէորքայ զօրավարին:

Ուրբաթ (24 Ապրիլ). թագաւորն դուրս ել ի նամագ:

Շաբաթ օրս (25 Ապրիլ) տէֆտէրտարն մարդ ուղարկեալ աստ եւ անդ թէ զՀայոց աթոռակալքն ըմբռնեալ բերջիք աստ. եւ գտեալ արանցն զՅարութիւն Զէլէպին եւ զՀաճի Սբտուլան եւ զՊախտիարն Սուրբ Գէորքայ՝ տարեալ ի բանտ եղին ի տան Պաշպախիւղուէ, եւ պահանջէ զգրամս միրիին թէ Դուք այսքան տարի պատրիարկ չէք եղեալ: Այս ոչ ի տէֆտէրտարէն եղեւ այլ ի վէզիրէն:

Կիրակի ԻԶ-ի օրս զԿիրակոսի տղան կնքեցաք, եւ Մղաեսին մեր հիւանդ էր:

Դշի (28 Ապրիլ) առաւօտուս ապա հանեցին զարսն ի բանտէն եւ պահանջեն զդրամն անյապաղ ԺՖ զուռուշ:

Յաւուրս յայտոսիկ եկին գեսպանք յնգիպտոսէ առ թագաւորն եւ բերեալ զիր հաւանութեան եւ աղաչանաց՝ եթէ տացէ կրկին իւրեանց դատաւոր մեծ զՄունգարիզատէն, զի գնացեալ զազին մեռեալ էր անդ, որ յետ նորա նստաւ. բայց ոչ թողին զնա որ փոխեցինն, այլ ասացին իշխանք եւ տեարք ամրոցացն եթէ Ահա՛ ջուր եւ հաց եւ ռոճիկ ի մերմէս լիցի, նիստ աստ եւ մի՛ երթիցես, եւ նա նստի: Եւ յետ աւու[րց] եւ զազին մեռանի եւ ապա առ[աքեն] գեսպան աստ եւ կրկին առնեն զնա մուլա:

Եւ Դշի (29 Ապրիլ) ի լուսանալ առաւօտուս ի պահու ժամուն զոր Փառք ի բարձունս ասէաք, աւան-